

## ԱՇԽԱՑԱՎԱՐՄԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ,

Հայաստանի Հանրապետության պետական

կառավարման ակադեմիայի դոկտորանտ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻԳՐԱՑԻՈՆ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՒՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ

Հողվածում քննության է առնվում Հայաստանի Հանրապետությունում միգրացիոն պետական ծառայության վարչական կարգավիճակի հետ կապված համալիր հարցերն ու խնդիրները: Հողվածի շրջանակներում նաև անդրադարձ է կատարվում պետական կառավարման այս կամ այն ոլորտի «քաղաքականության մշակում ու իրականացում» հասկացությունների հատակներման ու սահմանման հարցերին:

**Հիմնարարեր՝ վարչական կառավարման կազմակերպության նախագահը և իրականացում, պետական մարմնի գործառնության հրավածական շրջանակը:**

Սիգրացիայի կարգավորումը սոցիալ-իրավական (նաև տնտեսական) երևոյթ է, որը այս կամ այն շափով իր ազդեցությունն է բողնում միգրացիոն գործընթացում ընդգրկված մարդկանց նպատակների իրականացման վրա, անկախ այն բանից, թե քնակչության ակնկալիքներն իրատեսական են, թե՝ պատրանքային:

Հայաստանի Հանրապետության միգրացիոն քաղաքականության իրավական բազան կազմում է Հայաստանի Սահմանադրությունը, միջազգային պայմանագրերը, գործող օրենսդրությունը և այլ իրավական ակտերը: Վերոնշյալ իրավական ակտերի հիման վրա կարգավորվում է միգրացիոն գործընթացի բոլոր սուբյեկտների փոխգործակցությունը:

Հայաստանի Հանրապետությունում միգրացիոն հարաբերությունների կարգավորման նպատակով ստեղծված միգրացիոն պետական ծառայության վարչական կարգավիճակը որոշվում է պետության կողմից՝ նրան հատկացված գործառույթների և իրավակարգավորիչ գործիքների ամբողջությունից:

Սիգրացիոն պետական ծառայության իրավական կարգավիճակի առանձնահատկությունը կայանում է նրանում, թե այդ ծառայությունն ինչպիսի՞ հատուկ գործառույթներով է օժտված և ինչ վերահսկողական ու հսկողական նորմատեղծ և կազմակերպական-տնտեսական գործառույթներով:

Ներկայում բոլոր պետությունները, այդ թվում Հայաստանը, գգալի կարևորություն են տալիս միգրացիոն քաղաքականության տեսական դրույթների մշակմանը և գործառույթների կատարելագործմանը: Առաջնահերթային է միգրացիայի ոլորտում

գործընթացների կարգավորման, վարչական վերահսկողության կողմնորոշչների հատակեցումը:

Հայաստանի Հանրապետությունում միգրացիայի վարչական կարգավորման գործընթացին բավի հաղորդեց 2010 թվականի դեկտեմբերի 30-ին Հայաստանի կառավարության ընդունած «ՀՀ միգրացիայի պետական կարգավորման քաղականության հայեցակարգը»:

Հայաստանի Հանրապետությունում միգրացիայի վարչական կառավարման եւակետային սկզբունքը միգրացիայի միջազգային կազմակերպության հայեցակարգային նողելն է: Նրանում միգրացիան բնութագրվում է որպես երևոյթ, որը ներառում է պետության, երկրների քնակչության, կենսագործունեության բազմաթիվ ոլորտները: Սիաթանանակ, մողելը իր տեսլականն է առաջարկում միգրացիայի կառավարման գործունեությունն իրականացնել նախարարությունների և գերատեսչությունների դերակատարման վերաբերյալ<sup>2</sup>:

Չնայած ողջ կարևորությանը, նկատելի է, որ միգրացիայի կառավարման ՍՄԿ-ի առաջադրված մողելում սակավ տեղ է հատկացվում միգրացիայի կարգավորման գործում առանձին պետությունների օրենսդրության քննությանը:

Միգրացիայի գործընթացը կարգավորող պետական մարմինների վարչական կառավարման գործնեության համակողմանի ուսումնասիրության անհրաժեշտությունը ունի ոչ միայն տեսական, այլև գործնական նշանակություն: Առավել ևս, որ Հայաստանի Հանրապետությանը դեռևս չի հաջողվել լիարժեքը բրեն իրականացնել իր հանձնառությունը սոցիալ-տնտեսական ոլորտի բարենորոգումների իրականացման ասպարեզում:

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետությունում, սոցիալ-տնտեսական իրավիճակի վերջին տարիների աննպաստ զարգացումներին իր ազդեցությունը բողեց համաշխարհային ֆինանսա-տնտեսական ճգնաժամի խորացումը:

Հայաստանի Հանրապետությունում սոցիալ-տնտեսական իրավիճակի վատքարացումը զիսավոր պատճառ հանդիսացավ երկրից բնակչության զգայի մասի արտահոսքին: Մնահոգիչ է, որ արտագաղթի ուղի ընտրած մարդկանց մեծ մասը աշխատունակ անձինք են:

Հայաստանից արտագաղթողների համար արտերկրներում զգայի խոշնողուներ են առաջանում այն կապակցությամբ, որ նրանց գերակշռող մասը անօրինական միգրանտներ են: Անօրինական միգրանտները նույնպիս հետևողականությամբ փորձում են շրջանցել ինչպես ելքի, այնպես էլ նպատակի պետությունների օրենքները:

Սիզորացիոն ոլորտում ձևավորված նման անբարենպաստ հանգամանքներում է իր գործառությունները իրականացնում Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայությունը:

Սիզորացիոն քաղաքականության իրականացումը ներառվում է կառավարման պետական համակարգի գործունեության շրջանակներում: Նրան համապատասխան, Հայաստանի Հանրապետությունում ձևավորվել է միզորացիոն գործնիքացների կարգավորման պետական կառույց:

Հայաստանի Հանրապետությունում պետության միզորացիոն քաղաքականության կենսագործման առաքելությունը վերապահված է ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության միզորացիոն պետական ծառայությանը:

Սիզորացիոն ծառայության վարչաիրավական կարգավիճակը առաջին հերթին նրա կարգավիճակն է գործող գործադիր իշխանության համակարգում<sup>3</sup>: Այսինքն, Հայաստանի միզորացիոն պետական ծառայության կարգավիճակը ներկայում գործող գործադիր իշխանության համակարգում է: Ուստի, միզորացիոն պետական ծառայության վրա, որպես գործադիր մարմնի, դրված է Հայաստանի Հանրապետությունում միզորացիայի ոլորտում վերահսկողության և պետական ծառայությունների մատուցման գործառությների իրականացումը:

Նման խնդիրները հետևողականորեն կյանքի կոչելու և գործնականում իրականացնելու նախապայմանը՝ Հայաստանում միզորացիոն գործնիքացի կարգավորման հիմնական պատասխանատուի, Հայաստանի Հանրապետությունում միզորացիոն պետական ծառայության վարչաիրավական կար-

գավիճակի հստակեցումն է:

Հիշեցնենք, որ «կարգավիճակ» եզրույթը լատինական բառ է,<sup>4</sup> որը նշանակում է իրավական դրույթուն, վիճակ :

Իրավագիտությունում, իրավական կարգավիճակը բնութագրվում է որպես իրավունքի նորմերով սահմանված սուբյեկտների կեցվածք, իրավունքների և պարտականությունների ամրողություն: Իրավական կարգավիճակն այնպիսի կատեգորիա է, որն արտացոլում է պետության, հասարակության, առանձին կոլեկտիվների, շրջապատի մարդկանց հետ սուբյեկտի համահավաք կապերը<sup>5</sup>:

Իրավական կարգավիճակի հասկացության բաղադրիչներն են իրավասուրյեկտությունը, օրենքով սահմանված իրավունքները և պարտականությունները, հաստատագրված իրավունքների երաշխավորումը, ինչպես նաև՝ հանձնառությունների և պարտականությունների կատարումից խուսափելու դեպքում՝ օրինագանց անձին պատասխանաւորության ենթարկումը:

Իրավունքում առանձնանում են սահմանադրափական կարգավիճակ, վարչաիրավական կարգավիճակ, քաղաքացիական իրավական կարգավիճակ և այլ կատեգորիաները:

Միզորացիոն գործնիքացի կարգավորման հիմնախնդիրների կանոնակարգման տեսանկյունից կարևորվում է Հայաստանի Հանրապետության միզորացիոն պետական ծառայության վարչափական կարգավիճակի որոշումը:

Թերևս անհրաժեշտ է անդրադառնալ վարչական իրավունքի բնորոշմանը: Բաժանում ենք Յու. Ն. Ստարիլովի տեսակետը, ըստ որի. «Վարչական իրավունքը՝ իրավունքի բնագավառ է, (իրավական նորմերի համակարգ) որը առաջադրված խնդրի կատարման և պետության պարտականությունների իրականացման նպատակով կանոնավորում է ... հասարակական հարաբերությունները»:<sup>6</sup> Ըստ հեղինակի տեսակետի, գործադիր մարմինների վարչափական կարգավիճակը որոշելիս պետք է դեղիգավարվել տվյալ պետության գործող օրենքներով:

Սուածնորդվելով վերը նշված մոտեցմամբ, քննարկենք Հայաստանի Հանրապետության միզորացիոն պետական ծառայության վարչափական կարգավիճակի հիմնախնդիրները:

Հայաստանի միզորացիոն պետական ծառայությունն իր առաքելությունը իրականացնում է ակտիվութեն համագործակցելով ինչպես Հայաստանի Հանրապետության պետական մարմինների, քաղաքացիական հասարակության, այնպես էլ միջազգային կազմակերպությունների հետ: Հայաստանի միզորացիոն պետական ծառայության վարչափական կար-

ծունեռության կարևոր ուղղություններից է արտերկրների միգրացիոն ծառայությունների հետ աշխատանքային համագործակցության հաստատումը: Արտերկրների գործընկերների մասնակցությամբ պարբերաբար կազմակերպվում են կոնֆերանսներ, միգրացիայի կարգավորման խնդիրների հետ առնչվող գործնական քննարկումներ:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի դեկտեմբերի 17-ի N 1515-Ն որոշման հավելված N 1-ով սահմանվում է Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարության միգրացիոն պետական ծառայության կանոնադրությունը (այսուհետ՝ Կանոնադրություն), այդ Կանոնադրության 1-ին կետում ամրագրված է, որ «Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարության միգրացիոն պետական ծառայությունը (այսուհետ՝ ծառայություն) Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարության կառավարման ոլորտում գործող պետական մարմին է, որը մշակում և իրականացնում է միգրացիայի բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության քաղաքականությունը», իսկ Կանոնադրության 6-րդ կետի 1-ին և 2-րդ կետերում ամրագրված է. «6. Ծառայության նպատակները և խնդիրներն են՝

1) միգրացիոն գործընթացների պետական կարգավորման քաղաքականության մշակումը և իր իրավասությունների սահմաններում դրա իրականացումը.

2) միգրացիոն գործառույթներ ունեցող մարմինների համակարգում միգրացիոն քաղաքականության և դրա կիրարկումն ապահովող իրավական ակտերի մշակումը»:

Վերոգրյալից ելնելով կարող ենք փաստել, որ ներկայումս Հայաստանի միգրացիոն պետական ծառայությունը Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարության կառավարման ոլորտում գործող պետական մարմին է, որը մշակում և իրականացնում է միգրացիայի բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության քաղաքականությունը:

Այժմ քննության ենթարկենք վերոնշյալ՝ միգրացիայի բնագավառի Հայաստանի Հանրապետության կառավարության «քաղաքականության մշակում» և «քաղաքականության իրականացում» եզրույթները:

Քաղաքականությունը (policy) ունի բազմաթիվ չափելիություններ, և հաճախ շատ դժվար է պա-

տասխանել այն հարցին, թե արդյո՞ք առկա են այնպիսի ընդհանուր մեխանիզմներ քաղաքականության մշակման և իրականացման համար՝ եթե համեմատության մեջ վերցնենք պատմական փուլերն (շրջանները) ու բազմաթիվ տարբեր պետությունները:

Քաղաքականության մշակումը կրկնվող (լատ. iterativus) գործընթաց է, և այն այդպիսին կարևոր է դիտարկել երկու պատճառով՝

ա) կրկնման գործընթացում փորձն ու քաղված դասերը կարող են որպես տեղեկատվություն հեշտությամբ հաշվի առնվել և բարելավել կորդինացման աշխատանքները,

բ) կրկնողությունն օգնում է երկխոսություն վարել քաղաքականության և դրա իրականացման միջև՝ պաշտոնական քաղաքականության մշակման գործընթացից հետո :

Ենելով վերոգրյալից, փորձենք տալ պետական այս կամ այն ոլորտի քաղաքականության մշակում և իրականացում միասնական եզրույթի մեր բնորոշումը:

Պետական կառավարման այս կամ այն ոլորտի քաղաքականության մշակումն ու իրականացումն իրենից ենթադրում է՝ գործադիր իշխանության պետական մարմինների կողմից՝ իրենց գործադիր-կարգադրիչ գործառույթների շրջանակում՝ սահմանադրության, միջազգային պայմանագրերին և գործող օրենսդրությանը համապատասխան, որոշակի ժամանակահատվածի համար հանրային (ներառյալ հասարակական շահերը) շահերից ելնելով, համապատասխան ոլորտի պետական կառավարման ամբողջական համալիր գործընթացն է, որն իրենից ենթադրում է ստույգ ժամանակահատվածում պետական կառավարման համապատասխան ոլորտի փաստացի իրավիճակի գնահատումը, խնդիրներն ու մարտահրավերները և դրանց հաղթահարման (ներառյալ կանխարգելման) ուղիները, ուսուլածներն ու գործիքակազմը, ինչպես նաև զարգացման հեռանկարներն ու գործիքակազմը:

Հայաստանի Հանրապետության միգրացիոն պետական ծառայության Կանոնադրության 11-րդ կետի 1-ին կետում ամրագրված է, որ ծառայության պետն իր իրավասության սահմաններում օրենքով սահմանված կարգով ընդունում է գերատեսչական իրավական ակտեր, ինչը հակասում է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետին, ուր սպառիչ կերպով նշված են գերատեսչական ակտեր ընդունող մարմինները, որոնց շարքում ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության միգրացիոն պետական ծառայության պետը և վերջինս կարող է միայն ընդունել ամ-

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

հատական և ներքին (լոկալ) ակտեր՝ ըստ վերոնշյալ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի և 6-րդ հոդվածի համաձայն:

Ելեկով վերոշարադրյալից կարող ենք փաստել, որ Հայաստանի Հանրապետության միգրացիոն պետական ծառայությունը ներկայումս չունի անհրաժեշտ վարչահրավական գործիքակազմ՝ միգրացիայի բնագավառի Հայաստանի Հանրապետության կառավարության քաղաքականության ոչ մշակման, ոչ էլ իրականացման համար, քանի որ՝

ա) միգրացիոն պետական ծառայությունը գործում է Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարության կառավարման ոլորտում հանդիսանալով դրա մի մասը և բնականաբար ինքնուրույն չէ,

բ) իրականացնում է միգրացիայի բնագավառի քաղաքականության իրեն վերապահված մասը՝ միգրացիոն բնագավառի քազմաքիվ գործառույթներ վերապահված են գործադիր իշխանության պետական այլ մարմինների (ՀՀ ոստիկանություն, ազգային անվտանգության ծառայություն, աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն և այլն) և ծառայությունը վերոնշյալ քաղաքականության իրականացման աշխատանքների կորդինացման փաստագի հնարավորություն չունի,

գ) Միգրացիոն պետական ծառայությունն իրավունք չունի իրեն վերապահված ոլորտի քաղաքականության մշակման գործընթացում նորմատիվ իրավական ակտեր ընդունելու, կամ առանց միջնորդի (նախարարի) դրանց ընդունման նախաձեռնություն ցուցաբերելու, ինչը չի բխում մեր վերոնշյալ պետական կառավարման այս կամ այն ոլորտի քաղաքականության մշակման ու իրականացման ընորոշումից, ինչը փաստում է այն, որ Հայաստանի միգրացիոն պետական ծառայությունը ավելի շատ պետական գործակալություն է՝ հանրությանը պետական բնույթի ծառայություններ մատուցող, քան քաղաքականություն մշակող և իրականացնող գործադիր իշխանության պետական մարմին և այլն:

Միգրացիոն գործընթացների կանոնակարգման արդյունավետությունը պայմանավորված է պետության կողմից վարչահրավական և տնտեսական լծակների համաշափ կիրառմամբ: Այսինքն, միգրացիան կարգավորող իրավասու մարմինների կողմից այդ գործընթացի վերահսկումը և միգրանտների իրավունքների ու շահերի պաշտպանությունը վերապահված է միգրացիոն ծառայությանը և պայմանավորված է վերջինիս կարգավիճակով:

Հայաստանի միգրացիոն պետական ծառայության առաքելության իրականացման հաջողությունը պայմանավորված է նրա իրավասությունների, հանձնառությունների և պարտականությունների պետական մարմինների համակարգում ունեցած դերակատարմամբ: Այլ կերպ ասած, կարելոր է Հայաստանի միգրացիոն պետական ծառայության վարչահրավական կարգավիճակի հստակեցումը:

Ինչպես ժողովրդավարական մյուս երկրներում, Հայաստանում նույնպես, պետական մարմինների իրավական կարգավիճակը որոշվում է պետության սահմանադրությամբ: Նոյն կերպ Հայաստանի միգրացիոն պետական ծառայության վարչահրավական կարգավիճակը որոշվում է սահմանադրահրավական և վարչահրավական հիմունքներով:

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և կառավարության որոշումներով սահմանվում է Հայաստանի միգրացիոն պետական ծառայության պետական և հասարակական դերակատարումը, նրա կողմից լուծվելիք խնդիրները և գործունեության առանցքային ուղղությունները: Սիամանական հստակեցվում է այդ գերատեսչական մարմնի աղմինիստրատիվ կառուցվածքը, իրավասության շրջանակները, միգրացիոն ծառայության և նրա աշխատակիցների օրենքի առջև պատասխանատվությունը:

Նոյն կերպ, իրավունքի հիման վրա, որոշվում է միգրացիայի գործընթացների կարգավորման ասպարեզում այլ պետությունների հետ Հայաստանի համագործակցության ուղղությունները և գործելավերը:

Քննարկվող խնդրի տեսանկյունից նպատակային է ճշգրտել պետական մարմնի գործառնության իրավասության շրջանակները: Ըստ Ն.Ի. Գլազունովայի տեսակետի՝ «ցանկացած սոցիալական ինստիտուտի, (Երևոյթի) Փունկցիան միջոց է հասարակության մեջ նրա աղաւտացման, իր և հասարակության որոշակի պահանջների միջև համապատասխանության ապահովմանը» :

Վերը նշված մոտեցումը յուրովի կոնկրետացնում է Յու. Սիխոմիրովը: Ըստ նրա տեսակետի «Փունկցիան համապատասխան նպատակին հասնելու բովանդակալից գործունեության տարատեսակ է»<sup>11</sup>:

Տեսանելի է, որ Հայաստանի միգրացիոն պետական ծառայության գործունեության ուղենիշները և նրա կողմից իրականացվող գործառույթները պայմանավորված են այդ գերատեսչության՝ պետության մեջ ունեցած աղմինիստրատիվ իրավական կարգավիճակով:

Հայաստանի միգրացիոն պետական ծառայությունը գործում է ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության իրավասության ներքո: Համեմատության համար հիշատակենք, որ, ասենք Ռուսաստանի Դաշնությունում, Ղազախստանում, Բելառուսում և մի շարք այլ երկրներում միգրացիոն պետական ծառայություններն ընդգրկված են այդ պետությունների ներքին գործերի համակարգում: Աղբեջանում միգրացիոն ծառայության կարգավիճակը բարձրացված է գործադիր իշխանության մարմնի մակարդակի: Աղբեջանում միգրացիոն պետական ծառայությունը անհջականորեն գործում է կառավարության ենթակայության ներքո:

Դիտարկելով վերը նշված պետություններում միգրացիոն պետական ծառայությունների կարգավիճակը, կարելի է հետևություն անել, որ նրանց գործելակերպում գերիշխում է հարկադրանքի և միգրանտների իրավունքների սահմանափակման մերողը: Այսինքն ՌԴ-ի, Բելառուսի միգրացիոն ծառայությունները նախընտրում են ոչ թե միգրանտների խորհրդատվության, համոզման կամ աջակցման գործելակերպը, այլ մարդկանց ազատ տեղաշարժի և իրավունքների սահմանափակման մարտավարությունը:

Սեր կողմից կատարված հետազոտությունը ցույց է տալիս, թե ինչպիսի բարդ և բազմաբնույթ գործունեություն է ծավալել Հայաստանի միգրացիոն պետական ծառայությունը: Այդ գերատեսչությունն իր գործունեությունում դեկավարվում է Հա-

յաստանի Հանրապետության օրենսդրությամբ, ինչպես նաև՝ միգրացիայի գործընթացի կարգավորման միջազգային իրավական նորմերով: Վերոգրյալ ընդունելի է, և թույլ է տալիս ասել, որ միգրացիոն իրավունքի էությունն արտահայտվում է օրենսդրորեն ձևակերպված (ամրագրված) միգրացիոն իրավակարգում, որն՝

ա), միգրացիան դիտարկում է պետության կողմից կարգավորվող հասարակական հարաբերություն՝ բացահայտելով այդ ֆենոմենի նորմատիվ-իրավական բովանդակությունը,

բ) սահմանելով դրա իրավական կարգավորման առարկան,

զ) բացահայտելով իրավական կարգավորման սուբյեկտը, որպես մարմինների համակցություն, որոնք պատասխանատու են միգրացիոն գործընթացների պլանավորման (ծրագրման) և կարգավորման համար<sup>12</sup>:

Ամփոփելով վերոշարադրյալը, պետք է փաստենք, որ անհարթեցտ է Հայաստանի միգրացիոն պետական ծառայության վարչաիրավական կարգավիճակի հստակեցում անել, քանի որ ներկայում Հայաստանի միգրացիոն պետական ծառայությունն ավելի շատ նման է պետական գործակալության, որը հանրությանը պետական ծառայություններ է նաև գործում, քան թե ներկայացնում է որպես միգրացիոն ոլորտի պետական կառավարման բաղադրականության մշակման և իրականացման ֆունկցիոնալ կառույց:

<sup>1</sup> Прудникова Т.А. «Миграционные службы как субъект административно-правовых отношений: особенности и содержание закрепления административно-правового статуса», журн. Вестник Московского Университета МВД России, N 5/2013, ст. 192. <http://elibrary.ru/item.asp?id=20159055>

<sup>2</sup> St'u Usher, Erica (Chief Ed.) for International Organization for Migration, “Essentials of Migration Management. A Guide for Policy Makers and Practitioners.” International Organization for Migration (2004).

<sup>3</sup> Прудникова Т.А. «Миграционные службы как субъект административно-правовых отношений: особенности и содержание закрепления административно-правового статуса», журн. Вестник Московского Университета МВД России, N 5/2013, ст. 190. <http://elibrary.ru/item.asp?id=20159055>

<sup>4</sup> Современный словарь иностранных слов. Толкование, словоупотребление, словообразование, этимология, М., Вече, 2006, С. 577.

<sup>5</sup> Прудникова Т.А., Редкоус В.М., Акимова С.А. «Административно-правовой статус органов исполнительной власти (На примере миграционных служб), М. Закон и право, 2012, С. 3.

<sup>6</sup> Старилов Ю.Н. урс общего административного права: В 3 т. Т. 1: История. Наука. Предмет. Нормы. Субъекты. М., 2002. С. 307.

<sup>7</sup> Նոյն տեղում:

<sup>8</sup> St'u <http://center-yf.ru/data/economy/Vyrobokta-gosudarstvennoi-politiki.php>

<sup>9</sup> St'u <http://www.fao.org/docrep/014/i1679r/i1679r03.pdf>

<sup>10</sup> Глазунова Н.И. Система государственного управления, учебник для ВУЗ-ов, М., 2002, С. 393.<sup>11</sup> Тихомиров Ю.А. Теория компенсации, М., 2001, С. 170.<sup>12</sup> Брик А.Д. «Ограничения в миграционном праве в контексте теоретико-правовой интерпретации его сущности» /ЮРИСТЪ – ПРАВОВЕДЬ 2008(6)/ <http://elibrary.ru/item.asp?id=15115179>.

Անդր Այրապետյան

Кандидат юридических наук, доцент  
Докторант академии государственного управления РА

## РЕЗЮМЕ

*Административно-правовой статус  
государственной миграционной службы РА*

В статье комплексно рассматриваются основные вопросы и проблемы, связанные с административно-правовым статусом государственной миграционной службы. В статье также затрагиваются вопросы разработки, осуществления политики, а также уточнение и определение концепций государственного управления в разных сферах.

**Ключевые слова:** административно-правовой статус, юридический статус, разработка и осуществление политики, сфера (круг) компетенции государственного органа.

Ashot Hayrapetyan

PhD in law, Associate professor  
Doctoral in the Public Administration  
Academy of the Republic of Armenia

## SUMMARY

*The administrative and legal status of the State Migration  
Service of the Republic of Armenia*

The article deals with the main issues and problems related to the administrative and legal status of the state migration service. In the article author also discussed the issues of clarification and definition of “policy development and implementation” concepts in different spheres of public administration.

**Keywords:** administrative legal status, legal status, policy development and implementation, sphere of the competence of the state body.